ինքնատիպ կարծիք է հայտնում գրողի նովելների հերոսուհիների մասին: Բերելով բազմաթիվ օրինակներ՝ նա Զոհրապի հերոսուհիների տարօրինակ վարքագիծը, որ հաճախ դուրս է գալիս մարդկային առաքինության սովորական սահմաններից, բացատրում է առհասարակ իգական սեռի նկատմամբ հեղինակի աննպաստ վերաբերմունքով: Բանախոսի համոզմամբ՝ այդ հերոսուհիները արատավոր բացառություններ են և ամենևին չեն կարող ներկայացնել հայ կնոջ ավանդական տիպը: Այս ամենից հետո նրա եզրակացությունը կարծեք թե միանգամայն արդար ու համոզիչ է հնչում. «Բայց ինչո՞ւ այս հոռետեսությունը կանանց մասին. ինչո՞ւ մոռնալ իրենց անկեղծ հրայրքներուն անձնատուր, անոնց համար տանջվող, անոնցմով մեռնող գերազանցապես հերոս կիները, որոնք ամեն չարչարանք սիրով կը տանին՝ հավատարիմ մնալու համար իրենց հոգվոյն մեկ խորունկ զգացմանը:

Պիտի փափաքեի, որ վարպետը մտներ սեմերեն ներս ոչ միայն սրահներուն, ուր կիները հոլանի լանջքերով, մետաքսի շրշյունով իրենց ծոծրակին բուրումնավետ շնորհքը կը պտտցնեն, այլ նաև հոն, ուր կինը պարզ շրջազգեստի մը մեջ նույնքան գեղանի, պարտքի, աշխատության և ճշմարիտ սիրո կյանքը կ՛ապրի,– թող ըլլա զրկանքով, տոկունությամբ լեցուն կյանք մը, որմե իրեններուն երջանկությունը կը կազմվի»:

Սակայն խնդիրն այն է, որ Զ. Ասատուրը հարցին մոտենում է սովորական կենցաղային բարոյականության տեսակետից, մինչդեռ Զոհրապի նովելների աշխարհն իր սեփական օրենքներն ունի: Բացի այն, որ բանախոսի ակնարկած կանանց կողքին կարելի է բերել բազմաթիվ այլ օրինակներ, երբ կինն իր առաքինությամբ մի ամբողջ գլխով բարձրանում է իր շրջապատից, Զոհրապի կերտած գեղարվեստական իրականության մեջ այդ «ցուցանք» կանայք իսկ իրենց բացառիկությամբ հաստատում են յուրովի ճշմարտություններ, նրանց «տարօրինակ» վարքագծի հետևում մշտապես մխում են մարդկային «լուռ ցավեր», «խղճմտանքի ձայներ», նրանք ներկայացնում են «կյանքն ինչպես որ է»:

Շ. Միսաքյանի բանախոսության մեջ ականատես ենք լինում հետաքրքիր մի իրողության. այն ամենը, ինչ դարասկզբի քննադատը դիտում է իբրև Զոհրապի արվեստի «վրիպում», հետագա տասնամյակների, հատկապես մեր օրերի գրականագիտությունը ընդունում է որպես այդ արվեստի առանձնահատկություն և նվաճում՝ դրանց մեջ տեսնելով զոհրապյան նովելների հմայքի